ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի 26, փոստային դասիչ՝ 0026 հեռ՝(+374 11) 518811, էլ. փոստ ՝ shengavit@yerevan.am
24/194387-24

«ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԴԱ ԱՎԱԳՅԱՆԻՆ
(ՀՀ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, ՄԵԾԱՐԵՆՑ 23/2)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/174 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները, համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված պահանջների:

Տեղեկացնում եմ, որ 21.11.2024թ. թիվ Դ-147878 գրությամբ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ է դիմել «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության տնօրենը՝ տեղեկացնելով, որ հրաժարվում է իրականացնել 26.09.2024թ. կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/174 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված աշխատանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն

կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն թիվ Դ-147878-24 գրությամբ հրաժարվել է իրականացնել պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է վերջինիս հետ 26 սեպտեմբերի 2024թ. կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/174 ծածկագրով պայմանագիրը 9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով: «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900015211429 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազոր մարմին: Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նշված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

11/28/2024

X

ՌԱԶՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN RAZMIK 2610990367

ՌԱԶՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Ֆինանսական բաժին
կատ.՝ Շ. Մանվելյան
հեռ.011 518821